

Ուժի այլընտրանքային տեսություններ

Նենս Բել

Բռնության, խաղաղության, կոնֆլիկտի հանրագիտարան, (Encyclopedia of Violence, Peace, and Conflict, Three-Volume Set, Elsevier Science, 1999, էջ 1703)

Թարգմանությունն անգլերենից՝ Աննա Շահնազարյանի, խմբագրեց Արփիկե Գալֆայանը

Բառարան

Անհնազանդություն

«Թուլլերի» հավանական արձագանքներից մեկը ավանդական ուժային հարաբերություններում, որտեղ նրանք մերժում են «ուժեղների» պահանջները

«Մեկը՝ վերևում - մյուսը՝ ներքևում» հարաբերություններ

Հարաբերություններ՝ հիմնված այն դրույթի վրա, որ երբ երկու հոգի միասին են լինում, մեկը պետք է վերահաս, իսկ մյուսը՝ ստորահաս դիրք գրավի

Չուզահեռ կառույցներ

Սոցիալական նոր կառույցներ, որոնք գոյություն ունեն հների կողքին և կասկածի տակ են դնում հաստատված կառույցների լեգիտիմությունը՝ դրանց մարտահրավեր նետելով

Իշխանություն (ուժ ուրիշների նկատմամբ)

Ուժի ավանդական սահմանում, ըստ որի ուժ ունենալը նույնացվում է տիրապետելու հետ և որը հիմնականում հնարավոր է պահպանել հեղինակության, ֆիզիկական ուժի և հարկադրանքի շնորհիվ

Չորություն (ինքնազորություն, զորավիգություն)

Ուժի այլընտրանքային սահմանում, որը կենտրոնանում է ուժի՝ որպես «զորացման», կարողության և ունակության վրա

Չրոյի բերող արդյունք

Իրավիճակ կամ հարաբերություն, որում մեկի շահը ենթադրում է մեկ ուրիշի համապատասխան կորուստը

Ուժի հասկացությունը քաղաքական քննարկումներում հիմնարար նշանակություն ունի և դարեր շարունակ ինտենսիվորեն քննվել է հասարակագետ և քաղաքագետ տեսաբանների, ինչպես նաև՝ փիլիսոփաների կողմից: Թեև ուժի որևէ սահմանման շուրջ չկա համընդհանուր համաձայնություն, այդուհանդերձ եղած դիսկուրսները բավականին նման են իրար այն իմաստով, որ հեղինակների մեծ մասն ուժին վերաբերվում է որպես մի բանի, որին պետք է տիրապետել՝ հանուն սեփական կամքն այլոց նկատմամբ դրսևորելու: Ուժը, սահմանվելով որպես «ուժ ուրիշների նկատմամբ» (power over) (*թրգմ՝ այսպիսով հայերենում գտնելով «իշխանություն» համարժեք թարգմանությունը*), հիմնականում քննարկվում է մարդկանց վրա ունեցած հետևանքների համատեքստում:

Հիմնվելով այս սահմանման վրա՝ տեսաբանների մեծ մասը կենտրոնանում է հանրային ոլորտում իշխանություն ձեռք բերելու և այն պահպանելու մեխանիզմի ուսումնասիրության վրա: Ո՞վ և ու՞մ է իշխում: Որո՞նք են իշխանության տարբեր ձևերը: Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ իշխող դիրք պահպանելու համար և ինչպե՞ս են այդ ռեսուրսներն առավել արդյունավետորեն օգտագործվում: Ի՞նչ քաղաքական ստրատեգիաներ են բխում հասարակությունում իշխանություն ունեցողների գործողություններից, որպեսզի նրանք կառավարեն իրենց հպատակներին: Ո՞րն է տարբերությունը մարդկանց նկատմամբ լեգիտիմ

իշխանության և իշխանության բռնատիրական ու անընդունելի ձևերի միջև: Վերջին շրջանի հարցադրումներից է, թե միջազգային հարաբերությունների վրա ինչպե՞ս են ազդում տարբեր պետական առաջնորդների գործողությունները: Բոլոր այս հարցադրումներին բնորոշ են մի քանի ընդհանրություններ. նախ, նրանք ընդունում են, որ ուժի մասին բոլոր քննարկումներում ամենակարևոր հարցերն առնչվում են տիրապետման տեսքով հանդես եկող ուժին (*թրզմ` ըստ էության` հայերեն թարգմանությամբ` իշխանությանը*): Երկրորդ, ուշադրության արժանի հիմնական սուբյեկտներն իշխողներն են, նրանց վարքագիծը: Երրորդ, ուժի կարևորագույն դրսևորումները տեղի են ունենում քաղաքական (կամ առնվազն հանրային) ոլորտում: Թեև այս խնդիրներն, անկասկած, կարևոր են, ուժի մասին ավանդական տեսությունները վերջին ժամանակներս ավելի ու ավելի են քննադատվում նեղ սահմանման և բոլոր հասարակություններում առկա ուժի առավել լայն դրսևորումներն անտեսելու պատճառով: Այս մտահոգությունները փարատելու նպատակով որոշ հասարակագետներ և քաղաքագետներ սկսել են մշակել նոր տեսություններ: Թեև նրանք նույնպես իրարից տարբերվող մոտեցումներ ունեն, տեսությունների այս նոր կազմի հեղինակներն իրենց մտքերը մշակել են ընդհանուր տրամաբանությամբ, և նրանց աշխատանքներում կարելի է գտնել ընդհանուր թեմաներ: Այս հոդվածի նպատակն է բացահայտել այդ ընդհանուր թեմաները և քննարկել ուժի այլընտրանքային տեսությունների ազդեցությունն առավել լայն հարցերի` սոցիալական բռնության, խաղաղության և կոնֆլիկտի ընկալման վրա:

Ուժի լայն սահմանումներ

Ուժի գրեթե բոլոր այլընտրանքային տեսությունների մեկնակետը ուժի հղացքի (կոնցեպտի) սահմանման ընդլայնումն է, որպեսզի այն ընդգրկի ավելին, քան ավանդական հարաբերությունն է (փոքրաթիվ) «ուժեղների» և (մեծաքանակ) «անզորների» միջև: Շատ տեսաբաններ հստակեցնում են «ուժը մեկի նկատմամբ» (power over)` բնութագրելով այն որպես տիրապետում (domination), և «ուժը մի բան անելու» (power to), ինչը լայնացնում է ուժի հղացքը և ընդգրկում անհատական և համայնքային զորության բազմատեսակ ձևերը: Այս կերպ ուժն ընդհանուր առմամբ հստակորեն զատվում է իշխանությունից, հարկադրանքից ու վերահսկումից և ասոցացվում այնպիսի բնութագրումների հետ, ինչպիսիք են կարողությունը, ունակությունը, հմտությունը և ներուժությունը (potentiality): Այս հիմնարար շեղումն ավանդական հասկացությունից լայնացնում է խնդրո առարկան և դրա հետ կապված հարցադրումները` վերածելով դրանք *ուժային հարաբերությունների դինամիկայի*, որտեղ ներառված են ոչ միայն նրանք, ովքեր իշխում են, այլև նրանք, ում ավանդաբար պիտակավորել են «անզոր» կամ «ուժագուրկ» և, հետևաբար, բացառել ուժի ուսումնասիրություններում հիմնական խնդրո առարկա լինելուց:

Կիզակետի այս փոփոխության պատճառը մասամբ ուժի ավանդական կանխադրույթները հարցականի տակ դնողների հասարակական դիրքն է: Օրինակ, շատ են դեպքերը, երբ այլընտրանքային տեսաբանները կանայք են (Ֆեմինիստ և ոչ միայն), և ուստի նրանց տեսություններն ուղղորդվել են կանանց սոցիալական փորձառություններով: Ինչպես նկատել են շատ ֆեմինիստ տեսաբաններ, գենդերայնացված հասարակությունում տղամարդ կամ կին լինելու փորձառությունը հիմնարար կերպով է ձևավորում անձի աշխարհայացքը և պայմանավորում, թե ինչն է նրա համար կարևոր ու արժեքավոր: Ընդհանուր ենթադրությունն այստեղ այն է, որ ուժի ավանդական տեսությունները կենտրոնացել են այն հարցերի ու խնդիրների շուրջ, որոնք բնորոշ են տղամարդկանց և մասնավորապես` սպիտակամորթ տղամարդկանց փորձառությանը (այսինքն` նրանց, ովքեր պատմականորեն իշխողի դիրք են ունեցել բնակչության այլ հատվածների նկատմամբ):

Այս իրավիճակի արդյունքներից մեկն այն է, որ հասարակությունում «թույլ» բնորոշված խմբերը շատ ավելի քիչ ուշադրության են արժանացել կամ ընդհանրապես դուրս են մնացել ուժի մասին քննարկումներից: Ուժին առնչվող իրենց սուբյեկտիվ փորձառությանը ձայն տալու նպատակով կանայք դարձել են այլընտրանքային տեսությունների գլխավոր աղբյուրը. նմանատիպ ներդրումներ են ունեցել նաև գուևամաշկները (people of color), գաղութացված երկրների քաղաքացիները և ոչ-բնիկ ուղղակի գործողության դինամիկայով հետաքրքրվածները: Այս նոր տեսաբանների ներդրումները լայնացրել են այն համատեքստը,

որտեղ ուսումնասիրվում է ուժը, ինչպես նաև հենց ինքը՝ ուժի սահմանումը: Արդեն ընկալվում է, որ ուժային հարաբերություններ գոյություն ունեն ինչպես մասնավոր ոլորտում՝ ընտանիքում և ինտիմ հարաբերություններում, այնպես էլ՝ քաղաքականության և միջազգային հարաբերությունների հանրային ոլորտում, և որ ուժային հարաբերությունների այս երկու մակարդակները նշանակալիորեն փոխկապակցված են:

Այլընտրանքային տեսակետներում ուժը չի ընկալվում որպես «զրոյի բերող արդյունք» (zero-sum), որին կարելի է տիրապետել այլոց հաշվին: «Չրոյի բերող արդյունքի» մոտեցումը հիմնված է սակավության մոդելի վրա և ենթադրում է, որ ուժի քանակությունը սահմանափակ է բաշխվելու համար: Ուստի, եթե մեկի ուժը մեծանում է, մյուսի ուժը պետք է համապատասխանաբար նվազի: Այս մոտեցումը ստեղծում է «կամ-կամ» երկատված դասակարգումների մի ամբողջ շարք, որի շուրջ էլ կազմակերպված են ուժի ավանդական տեսությունները (օր.՝ իշխողներ և իշխվողներ, զորեղներ և անզորներ, պետություն և զանգվածներ, կեղեքողներ և կեղեքվածներ, գաղութարարներ և գաղութացվածներ): Այլ կերպ ասած՝ նման մոտեցումը կարելի է բնութագրել հարաբերությունների՝ «մեկը՝ վերևում, մյուսը՝ ներքևում» դինամիկայով, որտեղ հարաբերության յուրաքանչյուր կողմում սահմանված են վարքի հստակ նորմեր:

Ի տարբերություն սրա, զորացման տեսությունները (empowerment theories) շեշտադրում են ուժային այն հարաբերությունները, որոնք հիմնված են ուժի անսպառ ամկայության կանխադրույթի վրա (որպես կարողություն, ունակություն, էներգիա), և որ ուժային հարաբերությունների դինամիկան կարող է նմանվել «և-և» կամ «հաղթող-հաղթող» մոդելներին: Այլ կերպ ասած՝ ուժ հավանականորեն կարող են կիրառել հարաբերության մեջ ներգրավված բոլոր անձինք, և ուժի ավելացումը հարաբերության մի կողմում պարտադիր կերպով չի հանգեցնում ուժի պակասեցմանը հարաբերության մյուս կողմում: Սա հնարավոր է միայն այն պատճառով, որ ուժը չի սահմանվում որպես մի «բան», որին հնարավոր է տիրապետել և պահպանել որպես գանձ, այլ սահմանվում է որպես «կարողություն», որը հնարավոր է զարգացնել և կիսել այլոց հետ:

Չորացման (empowerment) տեսաբանները չեն հերքում սոցիալական շփումներում «իշխանության» ամկայությունը կամ կարևորությունը, նրանք պարզապես պնդում են, որ սա ուժի դրսևորման միակ ձևը չէ: Կրկին, սա ամենավերջին է այն բազմաթիվ մարդկանց սուբյեկտիվ փորձառությանը, ովքեր առաջարկում են ուժի մասին այլընտրանքային տեսություններ: Եթե նրանք իրենց հայացքը սահմանափակեին ուժի ավանդական տեսություններում գործող սահմանումներով, ապա իրենց դիրքը հնարավոր կլիներ բնութագրել միայն «թույլի» կամ «անզորի» նկարագրություններով, սակայն այս պիտակները ճշգրիտ կերպով չեն բնութագրում նրանց կյանքի փորձառությունը: Այնպես որ ուժի այլընտրանքային տեսությունների մշակումը հիմնված չէ հերքման կամ միամտության վրա, այլ ավելի շուտ ցանկության՝ ստեղծելու ավելի ընդգրկուն տեսություններ, որոնք ներառում են ուժային հարաբերություններում գտնվող բոլոր անձանց ու հավաքական խմբերի մարդկանց փորձառությունները: Կարևոր է շեշտել, որ ինքնագործությունը և զորակցությունը կարող են «թույլերի» կողմից կիրառվել իշխող և ենթարկեցնող հարաբերություններում, և կիրառվելու դեպքում դրանք «ուժեղների» իշխանությանը լուրջ մարտահրավեր են նետում: Այս մասին ավելի մանրամասն կխոսենք ստորև:

Ուժը՝ որպես ռեյացիոն և համայնքային երևույթ

Երբ ուժը (թրգմ՝ այստեղ՝ ուժի իշխանություն տեսակը) սահմանվում է որպես հատկանիշ, ապա «ուժեղները» (կամ նման հատկանիշ ունեցողները) կարող են ուսումնասիրվել նման հատկանիշ չունեցողներից լիովին առանձին: Սոցիալական և քաղաքական «էլիտաների» բազմաթիվ ուսումնասիրությունների և քաղաքական կուսակցությունների ու առաջնորդների դասական վերլուծությունների մոտեցումը հենց այսպիսին է եղել: Ուժի այլընտրանքային տեսությունների կարևոր ներդրումներից մեկն այն է, որ թեև վերը նշված մոտեցումն իրոք կարևոր տեղեկություններ է բացահայտում, այնուամենայնիվ այն ամբողջական չէ: Այս

քննադատությունը հիմնված է այն փաստի ըմբռնման վրա, որ ուժը (*իշխանությունը*) պարզապես հատկանիշ չէ, այն մշտապես և անխուսափելիորեն զարգանում է որպես անհատների և խմբերի միջև հարաբերություն՝ ինտերակտիվ սոցիալական համատեքստում: Այլ բառերով ասած՝ *իշխանությունը* «հարաբերութենական (ռեյազիոն)» երևույթ է, այն չի կարող կիրառվել մեկ անձի կողմից՝ այլոցից մեկուսացման մեջ:

Այս հիմնարար հայեցակետն իր ազդեցությունն ունի ինչպես ավանդական տեսություններում «թույլ» պիտակված անհատների միջև հարաբերություններն ուսումնասիրելու, այնպես էլ՝ «իշխողների» և «իշխվողների» միջև հարաբերություններն ուսումնասիրելու վրա:

Այլընտրանքային տեսաբանները հաճախ են առաջարկում, որ ուժը «համայնքային» երևույթ է, ոչ թե՛ անհատական հատկանիշ: Ուժը (*թրզմ՝ այս դեպքում՝ իշխանությունը*) սահմանելիս՝ Յաննա Արենդթն ավելի հեռուն է գնում և նշում, որ ուժը (*սահմանված որպես իշխանություն*) չի կարող կիրառվել՝ բացառությամբ այն իրավիճակների, երբ մարդիկ «գործում են համաձայնությամբ» (հակառակ դեպքում՝ այն զորություն է, Ֆիզիկական ուժ, հեղինակություն կամ բռնություն՝ որոնցից յուրաքանչյուրը հստակորեն գատելի է *իշխանությունից*): *իշխանությունն*, այդ դեպքում, ընկալվում է որպես համագործակցության, ոչ թե՛ վերահսկողության արդյունք: Այս կանխադրույթի շնորհիվ է հնարավոր եղել հեռանալ ուժը որպես *իշխանություն* բնութագրող ավանդական տեսություններից:

Այսպիսով՝ ուժի այլընտրանքային շատ տեսություններում կարևոր է դառնում համայնքի գաղափարը: Յամայնքներում մարդկանց իրար են կապում ընդհանուր շահերը, որոնք էլ խթան են հանդիսանում «ներքևից բխող ուժի» գործադրման համար: Ուժն այս համատեքստում չի ընկալվում սահմանափակ քանակությամբ մի բան, այլ ավելի շուտ՝ որպես ռեզներատիվ (վերածնվող) երևույթ. այն շատանում է, երբ կիսվում է: Այլընտրանքային տեսաբանները նաև նշում են, որ ուժը (*թրզմ՝ այս դեպքում՝ զորությունը, power within*) մի բան չէ, որից պետք է վախենալ որպես կոռումպացվելու և փչանալու աղբյուր (ինչպես ենթադրվում է Լորդ Ակթոնի հայտնի պնդումից¹), քանի որ այն կառավարվում է համայնքի բարոյական նորմերով: Նենսի Յարթսոքն առաջարկում է, որ «ուժը համայնքին կառուցվածք է հաղորդում հիմնարար կերպով», հենց դա է համայնքի ձևավորման շարժառիթը, ինչպես նաև այն սոսնձող և իրար պահող կյուրթ: Սևամորթ ֆեմինիստական միտքը վերլուծող իր գրքում Պատրիսիա Յիլ Զոլինսը շեշտադրում է համայնքի նշանակությունը Միացյալ Նահանգներում ռասայական կեղեքման ենթարկված խմբերի համար: Ըստ նրա, համայնքն ավանդաբար ծառայել է որպես «հավանական ապաստան», արտաքին կեղեքման պայմաններում հոգածության, զորացման և աջակցության աղբյուր: Ծիշտ այսպես են բնութագրվել նաև որոշ ֆեմինիստական խմբեր: Յամայնքը որպես ուժի աղբյուր դիտարկող այս տեսակետներից և ոչ մեկն էլ իմաստ չի կարող ունենալ ուժը որպես *իշխանություն* և անհատական հատկանիշ դիտարկող համատեքստերում, սակայն հենց այս տեսակետներն են, որ հիմնարար են ուժը որպես կարողություն, ունակություն և էներգիա սահմանող տեսությունների համար (*թրզմ՝ ինքնագործություն, գորակցություն*):

«Ուժեղների» և «թույլների» միջև հարաբերությունները դիտարկելիս՝ այլընտրանքային տեսաբաններն ընդունում են, որ *իշխանությունը* միավեկտոր երևույթ չէ: Թեև կարող է թվալ, թե ուժեղների և թույլների շփումներում էներգիայի փոխանակման աղբյուրը «վերևից է իջնում», բայց իրականում դա այդպես չէ: Դեռևս վաղ 1900-ականներին ուժային հարաբերությունների մասին Գեորգ Սիմելը նշել է, որ ցանկացած շփման մեջ կա «ազդեցությունների փոխանակում», անկախ այն բանից՝ դիտարկողին այդ փոխանակումն անմիջապես տեսանելի է, թե՛ ոչ: Ըստ Սիմելի՝ ուժային շփումների բազմաչափ բնույթի ընկալումը փոխակերպում է այն դիտանկյունը, թե կա «բացարձակ ազդեցություն մի կողմից և ազդեցությունը բացարձակորեն կրող մյուս կողմից»: Ուստի նման մոտեցումը շփումների ընկալումը վերածում է «սոցիոլոգիական ձևի», որին ներհատուկ է ազդեցությունների փոխանակումը, որտեղ ազդեցությունը բխում է փոխանակման «երկու» կողմից էլ: Սրանից կարելի է անել այն հետևությունը, որ հնարավոր չէ ընկալել *իշխանությունը* կամ «ուրիշների նկատմամբ ուժն»՝

1 Թրզմ՝ Նրա՝ «Power tends to corrupt and absolute power corrupts absolutely.» արտահայտությունը հավանաբար վերաբերում է *իշխանությանը* (power over).

առանց հաշվի առնելու այդ «ուրիշների» դերակատարումը: Ուժի այս ռեյտինգին (հարաբերութենական) չափումը շեշտադրելու արդյունքներից մեկն այն է, որ հաճախ անտեսվող «թույլերը» վերասահմանվում են որպես ուժային հարաբերությունների կարևոր մասնակիցներ, և նրանց դերակատարումն այլընտրանքային տեսությունների հիմնական կիզակետն է դառնում:

«Թույլերը»՝ կիզակետում

Մինչ ուժի ավանդական տեսությունների կիզակետում հիմնականում իշխողներն են, իշխանության բանեցման ձևերը և թե ինչպես է իշխանությունը գործադրվում առավել հաջող կերպով, այլընտրանքային տեսությունների ուշադրության կենտրոնում «հավասարման» մյուս կողմն է՝ «իշխվողները»: Սա թերևս այս տեսությունների ամենակարևոր ներդրումն է ուժի՝ որպես վերացական հասկացության, ինչպես նաև որպես քաղաքական գործողությունն դրա կոնկրետ դրսևորումների ընկալման հարցում: Միշել Ֆուկոն դիտարկել է, որ «ուժի կոնկրետ բնույթը» (այսինքն՝ այն կերպը, որով ուժը գործադրվում է) հնարավոր է ամենահստակ կերպով տեսնել «ներքևում» տեղի ունեցող ամենօրյա պայքարներում, այսինքն՝ տեսնել այն ուժը, որը ձևավորվում է հասարակությունում ավանդաբար «թույլ» սահմանվող մարդկանց կողմից: Նա քննադատում էր քաղաքական վերլուծաբաններին իրենց սահմանափակ հայացքի համար, որը կենտրոնանում էր վերևից իջնող ուժը ստեղծող ու պահպանող պետության և այլ սոցիալական հաստատությունների վրա, քանի որ նրանք ձախողել էին անդրադառնալ «իրենց ներսում ուժ ունեցող մեխանիկային»: Շատ դեպքերում «թույլերի» կողմից գործադրվող ուժի տեսակները շարունակում են անտեսանելի մնալ ուժի ավանդական ուսումնասիրությունների կողմից: Ջեյմս Ս. Սքոթը կիրառում է «ուժի թաքնված ծածկագրի» հասկացությունը՝ ուսումնասիրելու արտաքնապես անտեսանելի «անգործների ինֆրաքաղաքականությունը», ուստի «անգործ» տարբեր խմբերի նրա վերլուծությունը շատ կարևոր հայացքներ է բացում նրա վրա, թե տարբեր մակարդակներում ուժն ինչպես է կիրառվում:

«Թույլերին» վերլուծելու բանալին այն ընկալումն է, որ նրանք իրականում թույլ չեն: Այս պնդման գլխավոր հիմնավորումներից մեկն առնչվում է վերը նշված այն գաղափարին, որ ուժը հարաբերութենական (ռեյտինգին) երևույթ է: Թեև թվում է, թե իշխանության տեսքով հանդես եկող ուժն անսասան է, իրականում ուրիշներին վերահսկելու նպատակով ուժ գործադրողների դիրքը վերջնական արդյունքում բավականին անկայուն է, նույնիսկ՝ երերուն: Պատճառն այն է, որ իշխելու հարցում շարունակական հաջողությունը վերջին հաշվով կախված է նրանց համաձայնությունից, ում նրանք փորձում են իշխել: Այլ կերպ ասած՝ որպեսզի ուժային հարաբերությունում «իշխողի» դերը գործի, շփման հակառակ կողմում պետք է լինեն նրանք, ովքեր կկատարեն «իշխվելու» համար անհրաժեշտ պահանջները: Սրա ապահովումը պարտադիր կերպով չի ենթադրում ֆիզիկական ուժի կամ հարկադրանքի գործադրում, թեև ուժի այս կերպ գործադրումը կարող է որոշ ժամանակով հետաձգել «իշխվողների» ապստամբության գործողությունները: Նույնիսկ Մաքիավելին է ընդունել, որ իշխողը կախված է իր հպատակների բարի կամքից. իր՝ «իշխանը» գործում նա եզրակացնում է, որ բռնի հարկադրանքը կարող է ապահովել հպատակություն, բայց ոչ՝ մշտապես:

Իշխելու փորձ կատարողների համար կա այն վտանգը, որ իշխելու իրավունքի կամ կարողության հարցում նրանք կարող են լուրջ դիմադրության հանդիպել: Այս դիմադրությունը կարող է տեղի ունենալ տարբեր ձևերով՝ բռնի կամ ոչ-բռնի, խոսքային կամ ոչ-խոսքային, թաքնված կամ անթաքույց, սակայն բոլոր դեպքերում էլ՝ այն իրենից վտանգ է ներկայացնում: Ուժի այլընտրանքային տեսությունների շուրջ աշխատողներից շատերը մատնանշել են, որ վերջին հաշվով երկարաժամկետ իշխանությունն ապահովելու հաջողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխելու փորձ կատարող անձը կամ վարչակարգը իշխվողների կողմից օժտված լինի լեզվատիրության որոշակի աստիճանով: Այս լեզվատիրությունն օժտելուց հրաժարվելը կլինի «գորության» ամենաարդյունավետ դրսևորումը: Այս հայեցակետին բնորոշ է շատ հետաքրքիր մի պահ. եթե իշխելն ուժի ամենաազդեցիկ ձևն է, ապա ինչպե՞ս է ստացվում, որ այն առավել ծայրահեղ կերպ գործադրողներն ամենաշատն են վախենում այն կորցնելուց: Եվ ինչո՞ւ է ստացվում այնպես, որ ամենառեպրեսիվ ռեժիմների տապալման հավանականությունը դառնում է մաքսիմալ: Անհնար է այս հարցերին պատասխաններ գտնել՝

կենտրոնանալով միայն իշխողների վրա, մեկուսացնելով նրանց այն հարաբերություններից, որոնցով նրանք փորձում են իշխել:

Ոչ-բռնի պայքարի իր աշխատություններում Ջին Շարփը հիշատակում է անհպատակության ուժի պատմական օրինակներ, երբ մարդիկ հրաժարվել են լեգիտիմություն շնորհել իշխող դիրքում գտնվողներին: Ուժի այս ձևն առավել հաճախ դրսևորվում է գերազանցապես ռեպրեսիվ իրավիճակներում: Գանդին ուժի այս տեսակի ողջ ներուժը գիտակցել էր Յնդկաստանի անկախության պայքարում, ինչպես և գիտակցել էր Մարթին Լյութեր Քինգը Միացյալ Նահանգներում քաղաքացիական իրավունքների համար պայքարում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ տարբեր երկրների քաղաքացիներ հաջողությամբ մարտահրավեր են նետել Յիտլերին՝ հրաժարվելով լեգիտիմություն շնորհել նացիստական օկուպացիոն զորքերին: Վերջին ժամանակներում ոչ-բռնի հեղափոխություններ են տեղի ունեցել Ֆիլիպիններում, Արևելյան Եվրոպայում, Նախկին խորհրդային պետություններում և հենց Ռուսաստանում:

Տեսականորեն, ամենակարևոր պահն այստեղ այն է, որ անհամագործակցությունը, համաձայնությունից հրաժարվելը և իշխելուն տարբեր ձևերով դիմադրելը ոչ թե պարզապես «պատասխաններ» են ուժին, այլ դրանք ինքնին ուժի այլընտրանքային «ձևեր» են: Այսպիսով, այլընտրանքային տեսաբանները շատ հստակորեն շեշտադրել են այն, ինչ Էլիզաբեթ Ջեյնսոնը անվանում է «թուլյերի գորություններ»: Նա թվարկում է թուլյերի ուժերը, որոնցից թերևս ամենակարևորը «չհավատալու» ուժն է: Եթե իշխողներն ունեն նաև սահմանումներ տալու ուժը, նրանք պետք է առերեսվեն այն հավանականությանը, որ թվացյալ անգորները, ում իրականությունը փորձում են ձևավորել իշխողները, կարող են «չհավատալ» և մերժել իշխողների ձևակերպած ուժային հարաբերության սահմանումները: Սա է իշխելու համար այդքան անհրաժեշտ լեգիտիմության մերժման գերագույն արտահայտումը:

Ըստ Ջեյնսոնի, «թուլյերի» երկրորդ գորությունը կազմակերպվելու և հանուն սոցիալական փոփոխության հավաքականորեն աշխատելու ուժն է: Ուժի այս ձևը հիշեցնում է համայնքային զորացման գաղափարը, որը քննարկվեց վերը: Համայնքներն ապահովում են ոչ միայն այն տարածքը, որտեղ ձևակերպվում և հաղորդվում են ընդհանուր շահերը, այլ հանդիսանում են նրա անդամների ուժը, որով էլ սասանում են իրենց իշխանությունը պահպանելու՝ իշխողների փորձերը: Շատ տեսաբաններ շեշտել են, որ գորակցությունը (power with) պետք է գործադրվի հավաքականորեն՝ ոչ միայն հաջողության հավանականությունը բարձրացնելու համար, այլև որովհետև դա բխում է գորակցության բուն սահմանումից: Ինչպես արդեն նշվել է, գորակցությունն անհատական հատկանիշ չէ, այլ համայնքային երևույթ. այն կարող է գոյություն ունենալ բացառապես այն դեպքերում, երբ մարդիկ հանդես են գալիս հավաքականորեն:

Վերջապես, ուժի գործադրումը «թուլյերի» կողմից ոչ միշտ է հաճելի ձևեր ստանում: Բերենիս Զերոլը քննում է այն հավանականությունը, որ կեղեքված մարդիկ կարող են դրսևորել «կազմաքանդող ուժ»՝ որպես իշխողների կողմից սահմանված «օրենքի ու կարգի» մերժում: Նման գործողությունները կարող են ստանալ բռնի ձևեր՝ վանդալիզմ, անկարգություններ, հանրային սեփականության և ծառայությունների ոչնչացում: Դրանք տեղի են ունենում մարդկանց մեծ խմբերի կողմից, որոնք չունեն սոցիալական բարելավման երկարաժամկետ օրակարգ և ընդամենը դուրս են թափում կուտակված գայրույթը: Չնայած այն փաստին, որ «կազմաքանդող ուժի» դրսևորումը որպես կանոն ստանում է «կարճաժամկետ պոռթկման» տեսք, այն կարող է շատ դեստրուկտիվ լինել և արդյունավետորեն խափանել գործող սոցիալական, տնտեսական և քաղաքական գործող դրվածքները: Զերոլը պնդում է, որ այս տեսակի ուժը երկարաժամկետ կտրվածքով ի վիճակի է «քանդել հսկա կայսրություններ», ուստի այն պետք է ընդունել ու հետը հաշվի նստել՝ ուժի ավելի ներառական տեսություններ մշակելիս:

Անկախ այն հանգամանքից՝ «թուլյերն» իրենց ուժը դրսևորում են դրական, թե բացասական, բռնի, թե ոչ-բռնի ձևերով, կարևոր է ընդունել, որ նրանք լիովին ի վիճակի են իրական մարտահրավեր նետելու հարկադրանքով տիրապետող ուժին: Թեև որոշ ավանդական տեսաբաններ ընդունում են, որ դիմադրության ուժը պետք է չանտեսվի, նրանք շարունակում են ուշադրությունը կենտրոնացնել այն հարցերի վրա, թե ինչպես «վերահսկել» ուժի այս ձևը,

որպեսզի ուժի իշխող տեսակը գերակայի: Իսկ այլընտրանքային տեսաբաններից շատերն, ընդհակառակը, փառաբանում են թուլյերի ուժը և հաճախ իրենց ուշադրությունն ուղղում դրա հզորացումը խթանելուն: Սա կարող է մասամբ պայմանավորված լինել նրանց սուբյեկտիվ փորձառություններով և աշխարհայացքով: Ամեն դեպքում, հստակ է, որ որպեսզի հասարակական և քաղաքական ուժի մասին տեսությունը բավարար լինի, այն պետք է այնչափ ընդգրկուն լինի, որ ներառի ավանդաբար ուշադրությունից դուրս մնացած ուժի տեսակները:

Ուժի դրսևորման նոր ձևեր

«Թուլյերին» ուժի ուսումնասիրություններում ներառելով է պայմանավորված նաև ուժի դրսևորման այլընտրանքային մեթոդների գնումը: Իշխանությունը սովորաբար գործադրվում է աստճանակարգային (հիերարխիկ) կերպով և իր ծայրահեղ ձևերում՝ ֆիզիկական ուժի միջոցով, որպեսզի ապահովի «թուլյերի» ենթարկեցումը: Շեշտ է դրվում այս նպատակին հասնելու համար ռացիոնալ փաստարկի կիրառման վրա, իսկ այդ տոնը հաճախ հրամայական է և/կամ հարկադրական, հատկապես, եթե «ուժեղների» իշխանությունը կասկածի տակ է առնվել: Մարդկանց նկատմամբ իշխանություն ձեռք բերելու և այն պահպանելու նպատակներին տրամաբանորեն համապատասխանում են ինքնադրսևորման այս ձևերը: Սրանք, սակայն, չեն համապատասխանում այստեղ քննարկվող ուժի՝ «ինքնազորություն» կամ «զորակցություն» տեսակները ստեղծելու և պահպանելու ջանքերին:

Քանի որ զորացումը «զրոյի բերող արդյունք» կամ սահմանափակ քանակությամբ մի բան չէ, պետք չէ անհանգստանալ ուժը ուրիշներին փոխանցելու գործընթացում այն «կորցնելուց»: Կարիք չկա պաշտպանական դիրք բռնել, ընդհակառակը՝ զորացումը բացում է ուժի դրսևորման հավելյալ հնարավորություններ: Այս դրսևորումներից մի քանիսը կարող են ավանդական սահմանումների տեսանկյունից «ոչ ռացիոնալ» թվալ, սակայն դրանք շատ արդյունավետ կարող են լինել և ուժի այլընտրանքային ձևերի մեջ կարող են արտացոլել աֆեկտիվ տարրերը: Ուժի այս տեսակի դրսևորման բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել ոչ-բռնի պայքարի մասին գրականության մեջ: Գանդին, օրինակ, և նրան հետևած Մարթին Լյութեր Քինգը շատ լավ էին գիտակցում ուժը «ներքևից» հաղորդելու ինչպես աֆեկտիվ, այնպես էլ՝ կոգնիտիվ կողմերը: Ոչ-բռնության հռետորաբանությունը հաճախ է բարոյական կամ կրոնական տոն ստանում աշխարհիկ պայքարներում: Ինչպես Գանդին, այնպես էլ Քինգը շեշտադրում էին սիրո և ներողամտության անհրաժեշտությունն ազատագրական իրենց շարժումներում, իսկ «Սոլիդարիտատ» շարժման առաջնորդ Ադամ Միլնիկը ժամանակին կարևորել է Լեհաստանում հակամաքոջատիրության պայքարի «կրոնական» ետնապատկերը: Նույն կերպ, խաղաղության կին ակտիվիստները հաճախ են իրենց ուժը դրսևորել ակնհայտորեն անտրամաբանական, սակայն արդյունավետ ձևերով: Միացյալ Նահանգներում կին ակտիվիստները Պենտագոնը շրջապատել և ժապավեններ ու երեխաների նկարներ են կապել պարիսպներից: Նմանատիպ ակցիա են արել Անգլիայում հրթիռների մի ռազմաբազայում: Սրանք անզոր մարդկանց արձագանքներ չեն, այլ ուժի այլընտրանքային դրսևորումներ: Պետք է ավելացնել, որ ուժի նման դրսևորումն ավելի արդյունավետ է դառնում արդի ժամանակաշրջանում, քանի որ հնարավոր է լինում արագորեն և զլոբալ մասշտաբով վիզուալ պատկերներ հաղորդել հեռուստատեսության, համակարգիչների և այլ միջոցներով:

Ուժի նորարար և այլընտրանքային դրսևորումներ կարելի է գտնել նաև տարբեր կազմակերպությունների ներքին կառուցվածքները վերասահմանելու փորձերում: Ինչպես բել հուքսը, այնպես էլ Նենսի Յարթստոքը նշում են, թե ինչպես են ֆեմինիստները Միացյալ Նահանգներում մշակել գոյություն ունեցող կազմակերպություններում որոշակի խմբի բոլոր անդամների կողմից ուժի դրսևորումը դյուրացնելու նոր ստրատեգիաներ: Որոշումների կոնսենսուսային կայացման, պարտականությունների ռոտացիայի, ներքին ժողովրդավարության ստրատեգիաների ընդունման միջոցով նախկինում «անզոր» սահմանվածներն աշխատում են մեծապես ոչ հիերարխիկ կազմակերպություններ կերտելու և «զորեղ»/«անզոր» երկատումը վերացնելու ուղղությամբ: Ուժի դրսևորման ոչ ավանդական ձևերից մեկն էլ այլընտրանքային կամ «զուգահեռ» կառույցներ ստեղծելն է: Իշխանության վրա հիմնված ուժային հարաբերությունների

պահպանումը սովորաբար ենթադրում է գոյություն ունեցող սոցիալական դրվածքների և դրանց հենասյուն հանդիսացող հաստատությունների պահպանում: Նույն կերպ, ներքևից բխող մարտահրավերները կարող են արտահայտվել նոր դրվածքներ և շփումների մոդելներ ստեղծելու միջոցով, որոնք կնվազեցնեն թվայալ «անգորների» կախվածությունը իշխողների պահանջներից ու կանոններից: Չուզահեռ կառույցների ստեղծումը չի հերքում ռեպրեսիվ կառույցների գոյությունը, այն պարզապես մերժում է դրանց լեգիտիմությունը և դրանց գործադրած ուժի տեսակները:

Ուժի նման դրսևորման օրինակ է Գանդիի կողմից «կառուցողական աշխատանքի» կարևորումը, որպեսզի կառուցվի ազատ Հնդկաստան՝ առանց սպասելու, որ բրիտանացիները պարզապես ինքնուրույն հեռանան: Նա, օրինակ, հնդկական անկախության համար ստեղծեց ներկրվող տեքստիլի այլընտրանք՝ ոչ միայն պարզապես նախաձեռնելով դրա բոյկոտը, այլև ոգևորելով հնդիկներին, որ նրանք սեփական թելը մանեն ու գործեն սեփական հագուստեղենը: Այդպիսով նրանք ստեղծեցին այլընտրանքային, զուգահեռաբար գոյություն ունեցող դրվածք, որպեսզի բավարարեն իրենց կարիքներն՝ առանց իրենց երկիրը գաղութացրածներից կախվածության մեջ գտնվելու: Վացլավ Յավելը՝ Չեխիայի հայտնի այլախոհն ու ապագա նախագահը, նույնպես մինչև 1989-90-ականներին խորհրդային գործերի հեռացումը գրել է Չեխոսլովակիայում և Արևելյան Եվրոպայում հզոր այլընտրանքային մամուլ ստեղծելու անհրաժեշտության մասին: Թեև «ուժեղների» կողմից այս փորձերն անօրինական էին հայտարարվում, այնուամենայնիվ, այս կենսունակ այլընտրանքային դրվածքները «ներքևից բխող» ուժի հաղորդման արժեքավոր միջոցներ էին հանդիսանում: Ուժի դրսևորման նոր ձևերի այս բոլոր օրինակները պահանջում են ստեղծարարության ու ուժի այս ընդլայնված ձևի նկատմամբ նվիրվածության որոշակի աստիճան:

Ուժ և բռնություն

Ի՞նչ հայացք են բացում ուժի այլընտրանքային տեսությունները, եթե ընդհանրապես բացում են, ուժի և բռնության միջև հարաբերությունների վրա: Եթե ուժը դրսևորվում է որպես իշխանություն, դրան ներհատուկ է հիերարխիկ հարաբերություն, որտեղ կոնֆլիկտը վերջին հաշվով հանգեցնում է, որ մեկը կամ մի խումբը «հաղթի» մյուսին: Մրցակցային այս շփմանը հատուկ է բռնությունը (կամ առնվազն բռնության սպառնալիքը), իսկ բռնության գործադրման հավանականությունը կարծես բարձրանում է կոնֆլիկտի թեժացմանը զուգահեռ: Այս հոդվածում մեջբերված տեսաբաններից մի քանիսը հուշում են, որ ուժի այլընտրանքային ձևերի պրակտիկան կարող է նվազեցնել բռնության հավանականությունը: Այս պնդման հիմնավորումն արմատացած է այն կանխադրույթի մեջ, որ երբ ուժը վերասահմանվում է, կոնֆլիկտի միջոցներն ու ցանկալի արդյունքները նույնպես տարբեր կերպ են ձևակերպվում, իսկ կոնֆլիկտային հարաբերությունները չեն ուղղորդվում «մեկը՝ վերևում, մյուսը՝ ներքևում» մտածողությամբ, այլ ավելի շուտ ուղղորդվում են զորացման գաղափարով՝ որպես ընդհանուր նպատակ:

Այս առումով ոչ միայն անհնար, այլև անցանկալի է մարդկային շփումներում կոնֆլիկտից ձերբազատվելը: Կոնֆլիկտն անխուսափելի բան է, սակայն անխուսափելի չէ այն լուծելու հարցում բռնությանը՝ որպես միջոցի դիմելը: Նպատակը դեստրուկտիվ կոնֆլիկտը «կոնստրուկտիվ» կամ «պրոդուկտիվ» կոնֆլիկտի փոխակերպելն է: Փոխարենը սպառնալիք լինելու՝ կոնֆլիկտը կարող է ցանկալի սոցիալական փոփոխության հասնելու գործընթացում հանդես գալ որպես արդյունավետ գործիք: Օրինակ, Գանդին «կոնստրուկտիվ աշխատանք» տերմինը գործածում էր բնութագրելու համար ոչ-բռնի դիմադրությունն իշխանությանը, մի բան որ ինքը ջատագովում էր, սակայն համարում էր, որ ահա այսպիսի կոնստրուկտիվ կոնֆլիկտի միջոցով է, որ մարդիկ սկսում են գիտակցել իրենց «իսկական ուժը»: Ուայն Այզլերն իր «Չալիսն ու Բլեյրը» գրքում պնդում է, որ կոնֆլիկտներն այս կերպ լուծելու մեծ պատմական նախադեպեր կան և որ դրանք կապված են ուժի այլընտրանքային սահմանումների հետ, որոնք կանայք արդեն մի քանի դար է, ինչ առաջ են մղում: Ջին Շարփը նույնպես հուշում է ոչ-բռնի ուղղակի գործողության բազմաթիվ կոնկրետ և արդյունավետ օրինակներ՝ որպես ուժի տեսակ: Այս և ուժի այլընտրանքային տեսություններից արվող եզրահանգումն այն է, որ հստակ կապ կա ուժը որպես իշխանություն ձևակերպելու և բռնություն գործադրելու միջև: Այստեղից բխում է, որ իշխանության վրա չիմնված ուժի նոր սահմանումների որդեգրումը բռնությունը նվազեցնելու նպատակին հասնելու անհրաժեշտ քայլերից է:

Ուժի մասին Հանսա Արենդթի վերլուծությունը նույնպես կարևոր հայացքներ է բացում ուժի և բռնության միջև հարաբերության վրա: Արենդթն ուժը սահմանում է որպես մարդկանց կարողություն ոչ միայն գործելու, այլ համաձայնեցված կերպով գործելու: Այս սահմանումը տալիս՝ նա կոնկրետ ձևով հակադրում է ուժի գաղափարը բռնությանը: Արենդթի տեսանկյունից ուժը և բռնությունը իրարից տարբերվում են նրանով, որ ուժը (*թրզմ` այստեղ գործությունը*) մարդկային կարողություն է, իսկ բռնությունն ունի գործիքային բնույթ (այսինքն՝ այն պահանջում է կատարողներ և երբեք չի կարող ինքնանպատակ լինել, մինչդեռ ուժը կարող է ինքնանպատակ լինել): Սրանից նա բխեցնում է ուժի և բռնության հարաբերության վերաբերյալ մի շարք եզրահանգումներ: Նախ, թեև բռնությունը և ուժը հաճախ են միասին հանդիպում, դրանք փաստացի հակադրություններ են. այնտեղ, ուր բացարձակորեն իշխում է մեկը, մյուսը գոյություն չունի: Երկրորդ, ուժն այն «սոսինձն» է, որն իրար է կապակցում համայնքի անդամներին, մինչդեռ բռնությունը ոչնչացնում է համայնքը: Երրորդ և թերևս այս համատեքստում ամենակարևորը. թեև բռնությամբ կարելի է հաղթել ուժին, բռնությամբ ուժ ստեղծել երբեք հնարավոր չէ:

Բռնությունը հակված է կիրառություն ստանալու այն դեպքերում, երբ կորչում է ուժը, բայց քանի որ ուժը հնարավոր չէ ստեղծել կամ վերստեղծել բռնի գործողություններով, բռնությունը հետագայում հնարավոր է լինում հաղթահարել հենց ուժով: Որպես սրա օրինակ Արենդթը բերում է խորհրդային զորքերի ներխուժումը Չեխոսլովակիա 1968թ., երբ բռնության ուժեղ դրսևորումը կարծես ժամանակավորապես արդյունավետ էր, սակայն այն երբեք ուժ չդարձավ: Երբ նա գրում էր այս մասին 1969թ.-ին, նա դեռևս չգիտեր, որ ուժը Չեխոսլովակիայում վերջին հաշվով գերակայելու էր բռնությանը, սակայն նա տրամաբանորեն արդեն կանխատեսել էր այդ արդյունքը: Համաձայն բռնության և ուժի արենդթյան սահմանումների՝ «ոչ բռնի ուժ» հասկացությունն իրականում անտրամաբանական է, քանի որ ուժը երբեք չի կարող բռնի լինել, դրանք հակադիր հասկացություններ են: Արենդթի փաստարկը հանգեցնում է այն գաղափարին, որ վերջին հաշվով «բռնությունը նվազեցնելու» համար մենք պետք է «գորացնենք մարդկանց»: Այս տեսակետը տրամագծորեն հակադրվում է սոցիալական քաղաքականությունների ներքո գործող բազմաթիվ այն դրույթներին, թե բռնությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է վերահսկել (ուժագրկել) մարդկանց:

Անվաճի ակնհայտ օրինակներից է Միացյալ Նահանգների կառավարության սանձազերծած «ահաբեկչության դեմ պատերազմը»: «Ազատության պաշտպանության» և «հայրենիքը «օտարներից» պաշտպանելու» հորջորջի ներքո Միացյալ Նահանգների բանակը վերջին տարիներին Աֆղանստանում և Իրաքում իրականացրել է գործողություններ, որոնք հիմնված էին ուժի իշխանական ավանդույթի մեջ արմատացած կանխադրույթների վրա, այսինքն՝ որ բռնությունը հնարավոր է հաղթահարել բռնությամբ և հանգեցնել խաղաղության: Այլ խոսքերով՝ իշխանությունը չէ խնդիրը, խնդիր է այն, թե շփման ո՞ր կողմն է այն գործադրում: Մի կողմից իշխանությունը համարվում է «չարիք», «դեստրուկտիվ» և «անտրամաբանական» մի բան, սակայն մյուս կողմից՝ ցանկալի նպատակների հասնելու արդարացված և ողջամիտ միջոց: Համաձայն ուժի այլընտրանքային տեսաբանների, այս ընդհանրացված մոտեցման խնդիրն անշուշտ այն է, որ ուժի «գրոյի բերող արդյունք» ընկալումն անտեսում է թվացյալ «անգորների» արձագանքները և վերջին հաշվով վերարտադրում է «մեկը՝ վերևում, մյուսը՝ ներքում» դինամիկան, որն ի սկզբանե համարվել էր անընդունելի:

Սակայն կառավարություններն ու բռնություն գործադրողները միակը չեն, որ ուժի մասին իրենց ընկալումը սահմանափակում են իշխանությամբ. սա հաճախ հանդիպող երևույթ է նույնիսկ ոչ-բռնությունն ուսումնասիրողների և խաղաղություն ջատագովողների շրջանում: Բերենիս Զերոլը պնդում է, որ խաղաղագիտության հետազոտողները ձախողել են կասկածի տակ առնել ուժի ընկալումը որպես իշխանություն և այդ իսկ պատճառով առանց միտումնավորության խթանել են աշխարհի մի ընկալում, որը հակադիր է իրենց կողմից սահմանված նպատակներին՝ այսինքն գլոբալ ու տեղային բռնության նվազեցմանը: Ավանդական սահմանումներով «ուժեղ» համարվող անհատների, խմբերի և հաստատությունների վրա կենտրոնանալով՝ նույնիսկ խաղաղության ջատագովները հաճախ արտադրել են տեսական և էմպիրիկ աշխատություններ, որոնք առավելապես օգտակար են իշխանության հաստատմամբ ու պահպանմամբ մտահոգվածներին: Այս խնդիրը հաղթահարելու նպատակով Զերոլն առաջարկում է խաղաղագիտության ոլորտում հիմնարար

շրջադարձ կատարել և սկսել վերասահմանել ուժը, ինչն էլ կհանգեցնի «անգորների ուժերի» համակարգային ուսումնասիրության:

Քերոյի բառերով՝ «իշխանության կոռուքի մտավոր զսպաշապիկից» ազատվելը չափազանց դժվար է: Միշտ էլ չափազանց դժվար է դուրս գալ այն կոնցեպտուալ սահմանումներից, որոնք դարձել են մարդու ընդհանրացված աշխարհայացքի ենթագիտակցական բաղադրիչը: Սա, սակայն, հենց այն է, ինչն, ըստ ուժի այլընտրանքային տեսաբանների, պահանջվում է անել: Եվ իսկապես, վերջերս մեծացել է հետաքրքրությունը նոր աշխարհայացքներ ձևավորելու և սոցիալական գործողության նոր ձևեր մշակելու նկատմամբ, որը ոչ միայն ներառում է ուժի այլընտրանքային սահմանումները, այլև պահում դրանք մտածողության և գործողության կիզակետում: Օրինակ, քրիստոնեական պրոգրեսիվ աստվածաբաններից Ուոլթեր Ուիլքը որդեգրել է մի ծայրահեղ դիրքորոշում, որ բռնությունը երբեք ապաշխարհելի չէ և որ Նոր կտակարանի ուղերձի իրական ուժը հենց իշխանությունն (ուրիշի նկատմամբ ուժ) պահող կառույցների հետ կամ իր խոսքերով՝ «իշխանության համակարգի» ուղղակի հակադրության մեջ գտնվելն է:

Մեկ այլ օրինակ բխում է Գլոբալ արդարության շարժման տեքստերից և զարգացումներից, որը սկիզբ առավ Միացյալ Նահանգներում 1999թ. Միեթյուն Առևտրի համաշխարհային կազմակերպության ժողովը խափանած հազարավոր ցուցարարների գործողությունից: Թեև մամուլն ուշադրությունը բնեռեց ցուցարարներից քչերի բռնի գործողությունների վրա, ցուցարարների մեծ մասի գործողությունները ոչ-բռնի էին, հազարավոր մարդիկ էին մասնակցել ոչ-բռնության դասընթացների ցույցերից շաբաթներ առաջ: Այս շարժմանն ակտիվորեն մասնակցած ակտիվիստ և գրող Ստարիոքն իր աշխատություններից շատերում գրում է, թե որքան կարևոր է վերանայել ուժի ու բռնության սահմանումները: Գլոբալ արդարության շարժման մասին խոսելիս՝ նա նշում է. «Եթե մենք այս կռիվը մղում ենք բռնության հասկացություններով, մենք վտանգում ենք կարծրացնել մեր իսկ ոգին, և այդ կարծրացած ոգին կվթագնի այն աշխարհը, որը մենք ցանկանում ենք կառուցել հաղթանակի հասնելով: Մենք կանգնած ենք մի բռնի համակարգը մյուսով փոխարինելու վտանգի առջև...»: Այս միտքն արտահայտում է այն գերագույն հիմնավորումը, թե ինչո՞ւ է անհրաժեշտ վերանայել ուժի մասին գերակա սահմանումները: Ըստ այլընտրանքային տեսությունների, եթե շարունակենք գործել այն կանխադրույթով, թե իրական ուժը սահմանափակված է 2փուլների իշխանական և «գրոյի բերող արդյունքի» ձևերով, ապա չենք կարող խուսափել գոյություն ունեցող մերժելի սոցիալական վարքագծերը՝ օրինակ՝ բռնությունը, կրկնօրինակելուց: Նույն կերպ, եթե ուժը որպես իշխանություն անքակտելիորեն կապված է բռնության հետ, ապա ուժի վերահղացումը (վերակոնցեպտուալացումը) պետք է լինի բռնությունն ընկալելուն և վերջնական արդյունքում այն նվազեցնելուն ուղղված մեր ջանքերից առաջին ու անհրաժեշտ քայլը:

Հավելում թարգմանչից

Ուժի տարբեր տեսակների ընկալումը ոյուրին է դարձնում հենց հայոց լեզուն և բառերի ստուգաբանությունը:

Չորրություն բառի շնորհիվ հնարավոր է տարբերակել ուժի վերը նշված տեսակները:

*Այսպես, համաձայն Հր. Աճառյանի [Հայերենի արմատական բառարանի](#)՝ զորություն բառի արմատն է «զորը»՝ փոխառված իրանյան *zāvaræ* բառից, որը նշանակում է «ուժ», «զորություն»:*

Հայերենում, հատկապես՝ խոսակցական լեզվում գործածվում են զոր, զորքա, զորել բառերը, որոնք սերում են զոր (զորություն) «ուժ» իմաստով բառից, որը սակայն փոխառվել է թուրքերենից, այնուհետև հայերեն վերադարձել ուժի՝ հարկադրական, իշխող, բռնի իմաստով: Չորը, զորքան, զորողը (power over) հոդվածում քննարկված ուժի ավանդական՝ իշխող տեսակն է: Թեև ուժի տեսակների իմաստով որպես ավանդական ուժի ձև տեքստերում

օգտագործվում է «իշխանություն» բառը, «գոռ», «գոռել», «գոռբա» բառերն օգնում են ընկալել «իշխանություն» բառի իրական բնույթը:

Քաղաքաիրավական համատեքստում գործածվում է «լիազորություն» բառը: Դրա համարժեքությունը ժողովրդավարական կարգը բնութագրելուն առավելագույնն է: Այսպես, ժողովրդին է պատկանում **զորությունը**, որով նա լիա**զոր**ում է ընտրված պաշտոնյաներին (ծառայողներին)՝ կազմակերպելու հանրային կյանքին առնչվող հարցեր: Լիազորել բառի հետ անհամատեղելի է «իշխանությունը», ուստի սխալ է ավանդական՝ «ժողովրդին է պատկանում իշխանությունը» արտահայտությունը:

Չորությունն ունի հոդվածում քննարկվող այլընտրանքային սահմանմանը համապատասխանող՝ կարողություն, ունակություն, ուժ իմաստը՝ ներգործելու և ազդեցություն գործելու իմաստների կողքին, այն ունի նաև՝ կենսունակություն, դիմադրողականություն իմաստները (տես՝ [Արդի հայերենի բացատրական բառարան, 1976](#)): «Անզորների» ուժերի տեսակների իմաստով՝ ինքնազորությունը (power within) ինքնանպատակ ուժն է, չհավատալու, չենթարկվելու, իշխանությունը վիճարկելու և դրան դիմադրելու՝ ներքին կարողությունը: Հայերենում սրան համարժեք է նաև «ներուժ» բառը:

Ուժի՝ համայնքային կամ հավաքական բնույթին համապատասխանում են «զորակցություն» և «զորավիգություն» բառերը: Չորավիգ լինել՝ գործակից, աջակից, թիկունք, պաշտպան լինել (տես՝ [Արդի հայերենի բացատրական բառարան, 1976](#)): «Չորակցել»՝ կցել և կիսել զորությունը՝ ուժը: